ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Խորհրդի նախագահ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբեր, 2024 թվականի N 37-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հաշվի առնելով Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու անհրաժեշտությունը՝ ո ր ո շ ու մ ե մ.

1. Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահի նախաձեռնությամբ 2024 թվականի դեկտեմբերի 3-ին՝ ժամը 14:30-ին, գումարել Հանրային հեռարձակողի խորհրդի նիստ, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեում գտնվող իր գործունեության վայրում:

2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված՝ Հանրային հեռարձակողի խորհրդի նիստը գումարել հետևյալ օրակարգով.

1. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գույքի շուկայական արժեքը սահմանելու մասին հարցը:
2. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2025 թվականի վարչակազմակերպական կառուցվածքը եվ հաստիքացուցակը հաստատելու մասին հարցը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

29 նոյեմբեր, 2024 թվական
ք. Երևան